ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԿՈՄԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1929–1931 թթ.)

Հայաստանի առաջին Հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակից ելնելով՝ մի խումբ հասարակական գործիչների նախաձեռնությամբ 1920 թ. մարտին կառավարության անմիջական հովանավորության տակ ստեղծվեց Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը (այսուհետև՝ ՀԿԽԸ)[1]: Ընկերության հիմնական նպատակն էր՝ պատերազմի ժամանակ խնամել հիվանդ ու վիրավոր զինվորներին, բժշկական և նյութական օգնություն տրամադրել հաշմանդամներին, անապաստան երեխաներին, գաղթականությանը, տարբեր աղետներից տուժած ազգաբնակչությանը՝ դրանով իսկ նպաստելով երկրում առկա սոցիալական բազում խնդիրների լուծմանը:

Այդ նպատակները կյանքի կոչելու համար ՀԿԽԸ-ն դիմում է գաղթօջախներում ապաստանած հայրենակիցներին՝ նվիրատվությունների միջոցով օգնություն տրամադրելու խնդրանքով, նաև համագործակցություն է սկսում հանրապետության սոցիալական ոլորտում լայնածավալ գործունեություն իրականացրած արտասահմանյան մարդասիրական երկու խոշոր կազմակերպությունների՝ Ամերկոմի[2] և Անգլկոմի[3] հետ:

1920 թ. սկսած Ամերկոմը պարբերաբար նյութական աջակցություն է ցուցաբերել ՀԿԽԸ-ին, ինչը նոր կազմավորված ընկերության համար մեծ խթան է հանդիսացել իր հետագա գործունեությունն ավելի համակարգված կազմակերպելու գործում: Այդ մասին են վկայում 20-ական թվականների վերջին – 30-ականների սկզբին վերաբերող արխիվային նյութերը:

Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ) պահվող և ստորև հրապարակվող փաստաթղթերը (դրանց մի մասը անգլերենից հայերեն են թարգմանվել մեր

---

[1] *Տեղեկագիր Հայաստանի Կարմիր Խաչի, Փարիզ 1926, էջ 1:*

[2] *Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ) ստեղծվել է 1918 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի որոշմամբ, մինչ այդ գործող և Առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին օգնություն ցույց տվող Հայաստանի և Սիրիայի Նպաստի ամերիկյան կոմիտեի հիմքի վրա [հետագայում կրճատ անվանվել է Մերձավոր Արևելքի Նպաստամատույց (ՄԱՆ)]:*

[3] *Անգլիական օգնության կոմիտեն (Անգլկոմ) ստեղծվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ փախստականներին օգնելու նպատակով, որը կազմված էր անգլիական հայասիրական, հասարակական ու բարեգործական մի քանի կազմակերպություններից [Էմիլիա Ռոբինզոնի հիմնած «Հայկական ընկերությունը» («*Armenian Society»*), Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդը («*Lord Mayor's Fund»*), «Մանչեստրի կանանց ընկերությունը» և այլն]:*

կողմից) ներկայացնում են ՀԿԽԸ-ի և Ամերկոմի հարաբերությունները, համագործակցությունը՝ ավելի ամբողջական պատկերացում տալով երկրի համար սոցիալ-տնտեսական անչափ ծանր վիճակի բարելավման գործում մեծ ներդրում ունեցած այս երկու կազմակերպությունների փոխհարաբերությունների մասին:

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

№ 1

ՄԱՆ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9 սեպտեմբերի 1929 թ.
Լենինական

Հարգելի դոկտոր Կամսարական,

Կից ներկայացնում ենք այս ամռանը Երևանում Բուժքույրերի վերապատրաստման դպրոցի գործունեության վերաբերյալ երկու կողմերի պարտավորությունները կարգավորող համաձայնագիրը:

Նկատի ունենալով Ձեր և դոկտոր Ջալաթյանի[4] հետ տեղի ունեցած երեք խորհրդակցությունները, դոկտոր Հակոբյանի[5] և դոկտոր Մանթաշյանի[6] կողմից ուղարկված դպրոցի ծախսերի նախահաշիվը և մեր պարտավորությունները ներառող վերջին նամակը, մեծ անակնկալ էր մեզ համար: Մենք երբևէ չենք վերցրել բուժքույրերին օժանդակելուց զատ մեկ այլ պարտավորություն: Ուստի, զգալով, որ կա թյուրիմացություն, և քանի որ դպրոցի տեղափոխման ոչ մի հետագա նախապատրաստություն չի կարող ընթանալ, քանի դեռ հարցը հիմնովին չի քննարկվել երկու կողմի շահագրգիռ անձանց կողմից, խնդրում ենք, որ Դուք և Հանձնաժողովից Ձեր ցանկությամբ ընտրված անդամները ժամանեք Լենինական՝ վերջնական խորհրդակցություն անցկացնելու համար:

Սպասում ենք Ձեր պատասխանին:

Հարգանքներով Ձեր
Ջոզեֆ Վ. Բիչ
Կովկասյան տարածաշրջանի
Գործադիր տնօրեն

---

[4] *ՀԿԽԸ գլխավոր վարչության փոխնախագահ (բժիշկ Հայկ Ջալլադյան):*

[5] *ՀԿԽԸ գլխավոր վարչության անդամ-գանձապահ (բժիշկ Փայլակ Հակոբյան):*

[6] *ՀԿԽԸ գլխավոր վարչության պատասխանատու քարտուղար (բժիշկ Մարիամ Մանթաշյան):*

ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 13, թ. 50: Բնագիր: Մեքենագիր:

№ 2

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԱՆ-Ի ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13 սեպտեմբերի 1929 թ.
Լենինական

Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և Հայաստանի Կարմիր Խաչի միջև համաձայնագիրը վերաբերում էր Էդիտ Վինչեսթերի Բուժքույրական դպրոցի տեղափոխմանը Երևան, ինչպես նաև յուրաքանչյուր կողմի հետագա պարտականություններին, որոնք բաշխված են Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և Հայաստանի Կարմիր Խաչի միջև համատեղ՝ 1929 թ. սեպտեմբերից մինչև 1930 թ. հունիս:

Առ այն, որ Հայաստանի Կարմիր Խաչը պատասխանատու է.

ա) տարբեր աշխատանքների, ներառյալ դասախոսների աշխատավարձերի և դպրոցի բոլոր ծախսերի համար,

բ) հիվանդանոցներում ուսանողների գործնական աշխատանքի ապահովման, այդ թվում՝ ամերիկյան վերահսկողի կողմից վերահսկողության իրականացման համար,

գ) գործնական աշխատանքի անցնող ուսանողներին կացարանով ապահովելու և վերանորոգման, շինարարական ու նման աշխատանքների համար:

Առ այն, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը պատասխանատու է.

ա) բոլոր հիսուներեք (53) բուժքույրերի սպասարկման համար մինչև 1930 թ., ներառյալ հագուստը, յուրաքանչյուրի չափաբաժինը և ամսական տրամադրվող մի փոքր գումար՝ նախատեսված մանր ծախսերի համար, ոչ պակաս, քան 3 ռուբլու չափով, և ոչ ավել, քան 5 ռուբլի կտրվի ավելի քան տասներկու (12) ուսանողներին, որոնք ապրում են Երևանում, կտրամադրվեն համազգեստներ և փոխադարձ համաձայնության դեպքում հնարավոր է յուրաքանչյուրի համար սպասարկում անհատապես,

բ) Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը իր հնարավորություններով կիրականացնի ապրանքների տեղափոխումը Լենինականի բուժքույրերի տնից Երևան: Ինչը ներառում է. անկողին, անկողնային պարագաներ և սպիտակեղեն բոլոր հիսուներեք (53) բուժքույրերի համար, լրացուցիչ կահույք, թախտ, աթոռներ և սեղաններ, դասարանային պարագաներ, ներառյալ կմախք, պլակատներ, պնակներ, բուժքույրական գործնական գրքեր, ուղեցույցներ և հանրային առողջապահական ձեռնարկներ:

Սեղանի պարագաներ. յուրաքանչյուրին կտրվի մեկ կապոց, միայն մեկ անգամ, հետևյալ կերպ.

բաժակ – 1 հատ

ապուրի ափսե – 1 հատ
ճաշի ափսե – 1 հատ
բաժակ և բաժակապնակ – 1 հատ
դանակ, պատառաքաղ, թեյի գդալ, ճաշի գդալ – 1 հատ,
գ) Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից տրամադրվող աշխատավարձը ներառում է հետևյալը.
բուժքույրերի համար նախատեսված ամերիկացի վերահսկող,
վերահսկողի օգնական,
խանութ-սրահի և քույրական հանրակացարանի կազմակերպիչ,
կես դրույքով քարտուղար և թարգմանիչ,
դ) Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը համաձայն է իր օգնությունը ցուցաբերել միմիոգրաֆ թարգմանություններում կամ դպրոցի դասախոսություններում:
Վերոնշյալի համար կողմերը համաձայնում և ստորագրում են:

Մերձավոր Արևելքի Նպաստամատույցից Հայաստանի Կարմիր
Կովկասյան տարածաշրջանի Խաչից
տնօրեն-կառավարիչ Ջոզեֆ Վ. Բիչ (ստորագրված է)

ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 7, թ. 214–215: Բնագիր: Մեքենագիր:

№ 3

ПИСЬМО ОТ ПРЕДСТАВИТЕЛЬСТВА ЗАКАВКАЗСКОЙ РЕСПУБЛИКИ ПРЕДСЕДАТЕЛЮ АРМЯЎНСКОГО КРАСНОГО КРЕСТА С. КАМСАРАКАНУ С ПРОСЬБОЙ О СВЕДЕНИЎЯХ ОТНОСИТЕЛЬНО ШКОЛЫ СЕСТЕР МИЛОСЕРДИЯЎ

12 ноября 1929 г.
Тифлис

Представительство просит сообщить через н/сотрудницу т. Пахлавуни нижеследующие сведения относительно школы сестер милосердия Амеркома:

1. на каких условиях принята школа сестер милосердия,
2. количество учениц от Амеркома,
3. обслуживающий персонал,
4. какое оборудование передано Амеркомом Красному Кресту для школы,
5. годовой бюджет школы и помощь Амеркома.

Представитель Зак. Республики

при загр. орг. помощи Н. Тер-Газарян[7]
Пред. старшего секретаря А. Джиловдаров

НАА, ф. 154, оп. 3, д. 13, л. 346. Оригинал. Машинопись.

№ 4

ОТВЕТНОЕ ПИСЬМО ПРЕДСЕДАТЕЛЯЎ АРМЯЎНСКОГО КРАСНОГО КРЕСТА С. КАМСАРАКАНА ПРЕДСТАВИТЕЛЮ ЗАКАВКАЗСКОЙ РЕСПУБЛИКИ ПРИ ЗАГРАНИЧНЫХ ОРГАНИЗАЦИЯЎХ ПОМОЩИ Н. ТЕР-ГАЗАРЎЯНУ ОТНОСИТЕЛЬНО СВЕДЕНИЙ О ШКОЛЕ СЕСТЕР МИЛОСЕРДИЯЎ

12 ноября 1929 г.

Настоящим сообщаем требуемые Вами сведения относительно курсов врачебных сестер:

1. По соглашению с Амеркомом их школа принята нами целиком со всем существующим оборудованием общежития на 53 чел. и небольшим учебным оборудованием с условием содержания учениц-стипендианток до июня 1930 г., причем в дальнейшем могут быть новые условия соглашения.

2. От Амеркома приняты 30 учениц, из которых 21 составляет весь комплект 2-го курса, оканчивающего в 1930 г.

3. часть обслуживающего адм. хоз. персонала содержится Амеркомом, в том числе надзирательница за сестрами-ученицами мисс Макфедридж, а заведующий и весь преподавательский персонал содержатся за наш счет.

4. Амеркомом передано Красному Кресту все оборудование общежития и небольшое оборудование школы. Примечание: в случае необходимости можно будет дополнительно представить опись инвентаря.

5. Годовой бюджет школы, имеющей уже оба курса, исчислен в 50.395, из которых часть – а именно содержание учениц-стипендианток и оборудования общежития дает Амерком.

Пред. правления
Армкраскреста /Камсаракан/
Ответ. секретарь /Цовян/

НАА, ф. 154, оп. 3, д. 13, л. 347 и об. Копия. Машинопись.

[7] *Նարիման Տեր-Ղազարյանը 1922 թ. եղել է Անդրկովկասյան կառավարության ներկայացուցիչը արտասահմանյան մարդասիրական կազմակերպություններում: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է Անդրկովկասի տարածքում գործող օտարերկրյա կազմակերպություններին առընթեր Անդրժողկոմխորհի ներկայացուցչություն: Եղել է ՀՍԽՀ սոցապ ժողկոմ, գաղթականական գործերի գլխավոր վարչության նախագահ:*

№ 5

ՄԱՆ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13 օգոստոսի 1930 թ.
Լենինական

1930 թվականի հունիսի 4-ի հ. 61 թվակիր նամակում, մենք խնդրել էինք Ձեզ Երևանի պետական բանկի մեր հ. 505 հաշվեհամարին փոխանցել 1.252.90 ռուբլի:

Ինչպես մանրամասնորեն ներկայացված էր վերոհիշյալ նամակում, Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի այս գումարը 1929 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1930 թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար վարձակալության վարձավճարն է:

Մինչ այսօր մենք որևէ պատասխան Ձեզանից չենք ստացել՝ ոչ մեր բանկային հաշվին ստացված փոխանցման տեսքով, ոչ էլ մեր նամակի ստացման հաստատմամբ:

Մենք Նյու Յորքից երեք անգամ հարցումներ ենք ստացել՝ թե ինչու ձեզանից չի հավաքագրվել հետևյալ վարձավճարը: Չնայած շատ ավելի լավ կլիներ, որ մենք կարողանայինք հայտարարել հաշվեհամարի փակման մասին դեռևս հունիսի 30-ին, այնուհանդերձ, մեզ անհրաժեշտ է անհապաղ բացատրել այս հաշվեհամարի ներկա դրությունը:

Եթե մեր հաշվապահական գրքերում այս հաշվեհամարը դեռևս բաց մնալու համար որևէ պատճառ կա, մենք երախտապարտ կլինենք՝ առաջիկա մի քանի օրերի ընթացքում Ձեզնից բացատրություն ստանալ, այդպիսով՝ հնարավորություն տալով մեզ Նյու Յորքի գրասենյակին փաստերը ճշգրիտ և մանրամասն հաղորդելու:

Հարգանքներով Լ. Բ. Քոլինզ
Մերձավոր Արևելքի Նպաստամատույցից
Կովկասյան տարածաշրջանի
ֆինանսների և մատակարարումների գծով տնօրեն

ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 18, թ. 13: Բնագիր: Մեքենագիր:

№ 6

ПИСЬМО ЗАМЕСТИТЕЛЯЎ ГЛАВНОГО ДИРЕКТОРА АМЕРКОМА ПРЕДСЕДАТЕЛЮ АРМЯЎНСКОГО КРАСНОГО КРЕСТА ОБ УСЛОВИЯЎХ ВЫДАЧИ В АРЕНДУ НЕДВИЖИМОСТИ АМЕРКОМА

20 августа 1930 г.
Ереван

Настоящим подтверждаю получение Вашего письма от 20 августа с. г., коим Вы ставите Амерком в известность об условиях, на коих Красный Крест соглашается взять в аренду нижний этаж главного корпуса нашего дома в гор. Эривани, со всеми жилыми, подвальными и складочными помещениями во дворе, сроком по 1 июля 1931 года с арендной платой в 50 рублей в месяц, с обязательством очистить и сдать Амеркому все арендуемые здания 1 июля 1931 года, если Амерком не захочет возобновить настоящий арендный договор или найдет более целесообразным продать дом, причем Амерком о своем решении поставит Красный Крест в известность за два месяца вперед.

Амерком изъявляет свое согласие на все другие условия, указанные в Вашем письме, и заверяет Красный Крест, что как при возобновлении арендного договора, так и при продаже дома, Амерком, при равных условиях, безусловно окажет предпочтение Красному Кресту ССР Армении.

Зам. главного директора Амер. комит.
Кавк. отд.

НАА, ф. 154, оп. 3, д. 18, л. 14а. Оригинал. Машинопись.

№ 7

ՄԱՆ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ՝ ՍՆՆԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

29 սեպտեմբերի 1930 թ.
Լենինական

Հարգելի դոկտոր Կամսարական,

Ստորև ներկայացնում եմ Ձեզ, Ձեր ներկայացուցչի կազմած սննդի մատակարարման ցուցակը, որը հաստատել է Տեր-Ղազարյանը սեպտեմբերի 20-ին՝ բացառելով հետևյալը.

4 կշեռք

1 անգլիական տպիչ սարք:

Ինչ վերաբերում է սննդի մատակարարման խնդրին, ապա այլուրի փոխարեն, այնքան, որքան մենք Ձեզ պարտք էինք, Տեր-Ղազարյանը նվազեցրել է սննդի հասանելի չափաբաժինը հետևյալ կարգով.

թեյ	*150-ից*	*100 կգ*
մակարոնեղեն	*90*	*45* q
կակաո	*250*	*150*
կաթ	*20*	*10 տուփ*
չամիչ	*950*	*600 կգ*

Շատ ափսոս Տեր-Ղազարյանի այս որոշման համար, քանի որ հաշվարկելու համար, թե որքան ենք Ձեզ պարտք այլուրի դիմաց, պետք է հարցը Ձեզ հետ քննարկեմ:

Ես այսօր մեկնում եմ Թիֆլիս, ապա Բաթումի և, հավանաբար, կվերադառնամ հոկտեմբերի 10-ին: Վերադառնալուն պես հեռագիր կուղարկեմ՝ խնդրելով Ձեզանից ներկայացուցչին՝ ստանալու հաստատված ցուցակների առաքանին:

Անկեղծորեն Ձեր՝ Կ. Բ. Ֆլագգ
ՄԱՆ-ի Կովկասյան տարածաշրջանի
գործադիր տնօրեն

ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 15, թ. 210: Բնագիր: Մեքենագիր:

№ 8

ПИСЬМО ЗАМЕСТИТЕЛЯЎ ГЛАВНОГО ДИРЕКТОРА АМЕРКОМА ПРЕДСЕДАТЕЛЮ АРМЎЯНСКОГО КРАСНОГО КРЕСТА ОТНОСИТЕЛЬНО ПЛАТЫ ЗА АРЕНДУ НЕДВИЖИМОСТИ АМЕРКОМА

30 ноября 1930 г.
Ленинакан

Многоуважаемый доктор Камсаракан:

Гр-ка Чикеринг возвратилась из Эривани и доложила мне, что имела с Вами в высшей степени приятную беседу. Она просила меня написать Вам и разъяснить один пункт, который я недостаточно ясно изложил в моем письме № 111 относительно платы за аренду нашего дома в Эривани.

Сумма, задолженная нам с 1 ноября 1929 г. по 30 июня 1930 г. выражается в размере руб. 1.152.90.

Сумма, задолженная с 1 июля 1930 г. по 31 декабря 1930 г. выражается в размере руб. 300.00. На наших книгах у нас числится кредит Вашему счету в размере руб. 70.00, т. к. эта сумма была внесена нам Союз-хлебом за нем склада на месяцы июля и август с. г. и была получена нами до подписания договора с Вами 20 августа 1930 г. Ввиду того, что этот договор считается действительным с 1 июля 1930 г. То, само собою разумеется, что эта сумма в размере руб. 70.00 была отнесена нами как кредит Вашему счету у нас. Поэтому чистая сумма арендной платы в настоящее время – на шесть месяцев сего периода – не числится как руб. 300.00, а как руб. 230.00 т. к. мы разницу уже получили, как выше изложено.

С моей стороны это было упущением, что я не разъяснил точнее этот пункт в моем письме № 111. ЎЯ сам не упустил это из виду, писав Вам, когда писал Вам об арендной плате в письме № 111 и когда писал по поводу Союз-хлеба в письме № 110, но упустил из виду необходимость письменно изложить этот пункт Вам.

Прошу принять мои извинения по этому поводу.

С совершенным почтением
К. Б. Флагг
Зам. директора-распорядителя Кавк. отд.
Амеркома помощи на Бл. Востоке

НАА, ф. 154, оп. 3, д.15, л. 182. Копия. Машинопись.

№ 9

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՆ-Ի ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

17 հունիսի 1931 թ.
Թիֆլիս

Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի նվիրատվությունը Հայաստանի Կարմիր Խաչին.

Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքում գտնվող Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի Տնօրենների Խորհրդի լիազորությամբ՝ Կովկասյան տարածքում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի լուծարումից հետո Ժողկոմխորհի համաձայնությամբ՝ տնօրինության տակ գտնվող ներքոհիշյալ ունեցվածքը փոխանցվում է Հայաստանի Կարմիր Խաչին՝ Երևանում Բժշկական տեխնիկում կառուցելու նպատակով, որը, կազմակերպված լինելով Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից, այժմ տնօրինվելու է Հայաստանի Կարմիր Խաչի կողմից՝ Բուժքույրերի վերապատրաստման դպրոցում բուժքույրերի օթևանը և վերապատրաստումը կազմակերպելու համար. Հայաստանի Կարմիր Խաչի և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև ձեռք է բերվել համաձայնություն, ըստ որի՝ Օրիորդ Էդիտ Վինչեսթերի հիշատակը որոշակի կերպով կհավերժացվի և կկապվի կառուցվող հաստատության կամ Բուժքույրերի վերապատրաստման դպրոցի անվան հետ:

Նվիրատվությունը ներառում է հետևյալը՝

1. Երևանի սեփականությունը

1916 թվականին Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը Երևանում գնել է Ռուբենի - 107 փողոցում գտնվող գույքը, և այդ պահից ի վեր այն գտնվել է իր սեփականության և տնօրինության տակ:

Ի սկզբանե այս գույքը գնահատվել է 100.000 ռուբլի. Երևանի Քաղաքային Խորհրդի ընդունած քաղաքի բարելավման և ընդլայնման նախագծի համաձայն նոր պողոտա կառուցելու կապակցությամբ, տվյալ գույքի տարհանման անհրաժեշտություն է առաջացել: Նկատի ունենալով, որ այս սեփականությունը տնօրինվել է հինգ տարվա ըն-

թացքում և դրա գնահատվող մնացորդային արժեքը՝ փոխանցվում է մոտավոր գնահատված արժեքով 25.000.00 ռուբլուն հավասար:

2. Երևանի գույքը

Երևանի Ամերիկյան տան, Բուժքույրերի վերապատրաստման դպրոցի գրասենյակի և հանրակացարանի գույքը 1931 թվականի ապրիլի 10-ին, համաձայն հ. 101/0510 նամակի, փոխանցվել է Հայաստանի Կարմիր Խաչին՝ փոխհամաձայնեցված արժեքով՝ 4,500,00 ռուբլի:

1929 թվականին Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը Հայաստանի Կարմիր Խաչին հանձնել է պետքարանների համար նախատեսված երկու հորատանցք: Այս հորատանցքերի արժեքը կազմել է 52,36 ռուբլի:

3. Լենինականի գույքը

Լենինականի Պոլիգոնում գտնվող ամերիկյան տների, գրասենյակների և պահեստների գույքը փոխանցվել է Հայաստանի Կարմիր Խաչին քսանութ էջից բաղկացած ցուցակով՝ ստորագրված քաղ. Հայկ Դանիելյանի կողմից. վերոնշյալ գույքի գնահատված արժեքը կազմել է՝ 30,000,00 ռուբլի:

4. Լենինականի պաշարները

Լենինականի Պոլիգոնում գտնվող պաշարների մի մասը փոխանցվել է Հայաստանի Կարմիր Խաչին հ. D – 36, 63, 68, E– 18, F – 5 հանձնարարականների համաձայն, ստորագրված քաղ. Հայկ Դանիելյանի կողմից. այս գույքի գնահատված արժեքը կազմել է՝ 10,930,32 ռուբլի:

Այս պաշարները ներառում էին տարբեր բաժիններից պահեստ վերադարձված ապարատային միջոցներ, գրենական պիտույք, հագուստ, մթերք և զանազան այլ պարագաներ:

5. Երաշխիքային ավանդադրման պայմանագիր

Հայաստանի Կարմիր Խաչին է փոխանցվել 36 գույք պարունակող ոսկյա և արծաթյա իրերի համարակալված ցուցակ՝ նամակով ընդունված քաղ. Հայկ Դանիելյանի կողմից, դրանք տարիներ առաջ ստացվել էին Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից՝ որպես պայմանագրերի երաշխիքային գրավ, որոնք առգրավվել էին պայմանագրերի չկատարման արդյունքում: Կատարվել է այդ գույքի գնահատում, որի արժեքը կազմել է 3,000,00 ռուբլի:

6. Դատարանի կողմից քաղ. Ա. Գ. Խարազովին նշանակված գանձումները

1930 թվականին Լենինականի դատարանը քաղ. Ա. Գ. Խարազովին դատապարտել է գլխավոր հաշվապահի ծառայության ընթացքում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցից կատարած յուրացումների համար: Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը դատարանի հ. 639 հանձնարարականի համաձայն (Լենինականի դատարանի) Հայաստանի Կարմիր Խաչին է փոխանցում նրա հետագա աշխատավարձից պահումները ստանալու իրավունքը, որի գումարը կազմում է՝ 1,691,52 ռուբլի:

Դատարանի որոշմանը կցվում է նաև Կովկասյան տարածքում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի գործող գործադիր տնօրեն պրն Կ. Բ. Ֆլազգի՝ այդ պահումները Հայաստանի Կարմիր Խաչին փոխանցելու վերաբերյալ Լենինականի նոտարական գրասենյակում հաստատված հանձնարարականը:

7. Լենինականի Պոլիգոնի կաթնամթերքի և անասնապահական տեխնիկումի հաշիվը

Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին կից՝ Կառավարության Ներկայացուցչության՝ քաղ. Տեր-Ղազարյանի հաստատմամբ, Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի Պոլիգոնից և կենտրոնական պահեստից պաշարներ են փոխացվել Գյուղժողկոմի գյուղտեխնիկումին՝ այժմյան Կաթնամթերքի և անասնապահական տեխնիկումին: Փոխանցված պաշարների արժեքը կազմել է 34,097,67 ռուբլի:

Այս հաշվի վճարումը երաշխավորվում էր Ներկայացուցչության կողմից: 1931 թվականի հունիսի 10-ին մենք ստացել ենք վերոհիշյալ տեխնիկումի հ. 697 նամակը, որը հանդիսանում էր Հայաստանի Կարմիր Խաչի ցպահանջ վճարման պարտաթուղթ:

8. Կանխիկ գումար – Լենինականի պետական բանկի փոխանցում

Լենինականի պետական բանկի գրավոր հանձնարարականի համաձայն՝ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հ. 971 ընթացիկ հաշվի գումարը փոխանցվել է Հայաստանի Կարմիր Խաչի՝ Երևանի պետական բանկում գտնվող հ. 66–244 ընթացիկ հաշվին: 1931 թվականի հունիսի 17-ի տվյալներով Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հաշվեկշիռը կազմել է 56,990,00 ռուբլի:

9. Կանխիկ գումար – Թիֆլիսի պետական բանկի փոխանցում

Թիֆլիսի պետական բանկի գրավոր հանձնարարականի համաձայն՝ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի հ. 2344 ընթացիկ հաշվի գումարը փոխանցվել է Հայաստանի Կարմիր Խաչի՝ Երևանի պետական բանկի հ. 86–344 ընթացիկ հաշվին: Կանխիկ գումարը կազմել է 28,000,91 ռուբլի:

Այսպիսով, սույն նամակով փոխանցվող հանրագումարը կազմել է՝ 184,271,67 ռուբլի:

Հարկ է նշել, որ ի լրումն այս գումարների, հավանաբար, Թիֆլիսում և Բաթումում Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի փոխադրման ու անձնակազմի բոլոր լուծարումներից և արտահանումների ծախսերից հետո՝ կարող է կանխիկ գումար մնալ, որի ստույգ չափը չի կարող նշվել սույն փաստաթղթի մեջ: Այս գումարը կփոխանցվի Հայաստանի Կարմիր Խաչի Բաթումի ներկայացուցչին:

Այս նվիրատվության պաշտոնական փոխանցումը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի անունից ստորագրվել է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի գործող գործադիր տնօրեն պրն Կ. Բ. Ֆլազգի կողմից և Հայաստանի Կարմիր Խաչի կողմից. վերջինիս համաձայնությունը ստորագրել է իրենց ներկայացուցիչ՝ Փ. Ս. Հակոբյանը, ով գործուղվել էր Թիֆլիս հենց այդ նպատակով:

Նյու Յորքում գտնվող Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի Տնօրենների Խորհրդի հրահանգների համաձայն՝ Հայաստանի Կարմիր Խաչը, ընդունելով սույն նվիրատվությունները, նաև համաձայնվում է ընդունել 1930 թ. դեկտեմբերի 16-ից հետո Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի դեմ ուղղված յուրաքանչյուր հիմնավորված հայցադիմումի պատասխանատվությունը: Կառավարության Ներկայացուցչության և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի միջև կայացված համաձայնությամբ՝ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից Թիֆլիսի □Զարյա Վոստոկա□ և Երևանի □Խորհրդային Հայաստան□ թերթերում զետեղվել են լուծարման մասին հայտարարությունները, նշելով, որ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին ուղղված բոլոր հայցերը պետք է ներկայացվեն Կառավարության Ներկայացուցչության կողմից մինչև 1930 թ. դեկտեմբերի 15-ը, այլապես դրանք կհամարվեն չեղյալ և անվավեր: Այսպիսի հայցեր չեն ներկայացվել Կառավարության Ներկայացուցչությանը, և, հետևաբար, մինչև 1930 թ. դեկտեմբերի 15-ը Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի դեմ ուղղված որևէ վավեր հայց չի ներկայացվել: Ինչպես մենք գիտենք, բոլոր հաշիվները ամբողջովին կարգավորված են, և Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի դեմ չկան հայցադիմումներ կամ հիմքեր, որոնք կարող են հայցադիմումների տեղիք տալ:

Ընդունեց՝
Պրն Փ. Ս. Հակոբյան
Հայաստանի Կարմիր Խաչի ներկայացուցիչ

ՄԱՆ-ի Կովկասյան տարածաշրջանի գործող գործադիր տնօրեն
Պրն Կ. Բ. Ֆլագգ

ՀԱԱ, ֆ. 154, ց. 3, գ. 7, թ. 210–212: Բնագիր: Մեքենագիր: